**Ձև N 1**

**ՑԱՆԿ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համա–կատարողը | Ժամկետը | Ֆինանսա–կան ապահո–վումը | Հղումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** |
| 1. | **«Հայաստանի Հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացման 2019-2022 թթ. ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը** | «Հայաստանի Հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացման 2019-2022 թթ. ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունում, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացմանը: | ՀՀ սպորտի և երիտասար-դության հարցերի նախարարություն | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարու–թյուն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարու–թյուն, ՀՀ սփյուռքի նախարարու–թյուն | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջ-վում: | ՀՀ կառավարու-թյան 2017 թվականի հունիսի 19-ի № 646-Ա որոշման հավելվածի կետ 4.6.1, ենթ. 2 |
| 2. | **«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2018-2024 թվականների ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկին հավանություն տալու** | ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումը կնպաստի հաշմանդամային սպորտի զարգացմանը, մասնավորապես՝ հաշմանդամության նկատմամբ բնակչության | ՀՀ սպորտի և երիտասարդու–թյան հարցերի նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարու–թյուն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարու– | փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջ-վում: | ՀՀ կառավարու–թյան 2017 թվականի հունիսի 19-ի № 646-Ա որոշման հավելվածի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը** | դրական վերաբերմունքի ձևավորմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը, ակտիվ հանգստի կազմակերպման և վերականգնման ապահովմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը, որակյալ մարզիկների և մարզիչների պատրաստմանը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և անհատ մարզիկների մասնակցության ապահովմանը, պարալիմպիկ, սուրդլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների գրանցմանը: | | թյուն | | | կետ 4.6.1, ենթ. 3, ՀՀ կառավարու-թյան 2017 թվականի սեպտեմբերի 7-ի № 38 արձանա-գրային որոշման կետ 33.2 |